



Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

Չորեքշաբթի

10 Հունիսի 2013 թ. № 19 (292)

www.syuniacyerkir.am

Չմասնակցել սպին...

ԻՈՍԻՑ ԲՐՈՂՍԿԻ

Հովիկ Ազոյանի անունն ու գործը՝ անձեռակերպ հուշարձաններ

ՆՇԱՆԱՎՈՐ ՍՅՈՒՆԵՑԻՆԵՐ

Վաղուց ավարտվել է գարնան կանաչ հեքիաթը, իսկ ամառն իր հորինած երգն է սփռում ամենուր:

Իմ առջեւ մեղմորեն բացվող հերթական օրն է: Մի պայծառ ճամփա, մի զվարթ փողոց ինձ ուղեկցում են յուրաքանչյուր սիսիանցու քաջ հայտնի մի տուն՝ Ազոյանների օջախ: Տաք օրը ծվարել է Ազոյանների հարկի տակ, խաղաղ շնչում է ամեն մի անկյուն... Երանության մեջ է հոգեւոր աշխարհա, քանզի համոզված եմ, որ այդ տաքուկ անկյունում, այդ հոգեհարազատ օջախում հարաբերվելու եմ ջերմացող հոգիների հետ, ու ինքս էլ ավելի եմ ջերմանալու:

Ամխռով առօրյայիդ մեջ, երբ թվում է՝ շուրջդ ոչինչ չի կատարվում, մեկնեմ ցանկություն ես ունենում թերթել անցյալի էջերը, հետ տալ ժամանակը, որովհետեւ ինչ-որ հարազատ գայթակղություն ստիպում է գրել լավի, բարու, գեղեցիկի մասին: Միշտ էլ նորատեսուրիդ անկյունում մի թաքուն հպարտությամբ ֆիքսում ես թեմաներ, կերպարներ, որոնք պարբերաբար կյանքի ես կոչում: Այդպիսի առաքելություն ունեմ եւ այս պահին՝ յուրովի ներկայացնելու Միսակյան աշխարհում հայտնի անձնավորության՝ Հովիկ Բաղդասարի Ազոյանին, ում ճանաչողներն, անշուշտ, առաջին հերթին կնշեին նրա պատվախնդիր տեղացիները, անկեղծ սիրտը, նվիրումը, աշխատասիրությունը, ժողովրդասիրությունը...

Ապագայի ճամփան անցյալի միջով է անցնում, իսկ հետ է մայում անցյալ չունեցողը: Քայլերն այդ ճամփով, Հովիկ Ազոյանի անցած ճանապարհով, որ թեւս արդեն անցյալ է, բայց այնքան հարուստ է իրադարձություններով, հետաքրքիր է, ինքնատիպ...

Կփորձեմ ներկայացնել վերհուշներից հառնող մի իրական կերպար, ում կյանքը թեւս շատ բան է տվել, բայց պահանջել է ավելին:

Երեւի Աստուծո կամեցողությամբ էր, որ կառուցելու ձիրքը խոր արմատներ էր ձգել պատանի Հովիկի հոգում, ուստի 20-ամյա պատանին սովորեց Քաջարանի շինտեխնիկումում, հետագայում՝ Լենինգրադի պոլիտեխնիկական շարունակությունը՝ էջ 5



Վերանգավոր անումալիա

ՌԵՊԼԻԿ

Տեղայնամտությունը՝ մարտնչող տգետների նոր հանգրվան

Տարեկիցներս (եւ ավելի տարիքավորները) կիսատատեն խոսքիս իսկությունը, որ անգամ խորհրդային տարիներին (մաեւ դրանից առաջ) սյունիք-զանգեզուրյան չորս շրջանի բնակիչների հարաբերություններում, ամենօրյա շփումներում տեղայնամտությունը, զավառամտությունը մերժելի են եղել: Եղել են ու կան կենցաղային, ավանդույթների փոքր տարբերություններ շրջանների (երբեմն կողք-կողքի գտնվող գյուղերի) միջեւ, բայց դրանք, առանձին-առանձին ուշագրավ լինելով հանդերձ, ավելի են հարստացրել սյունեցու ընդհանրական հոգեկերտվածքը եւ Սյունիքն առհասարակ: Մարզկենտրոնում տեսական ժամանակ աշխատողներս նույնիսկ չենք էլ նկատում, թե որն է մարզի չորս շրջանի բնակչության սովորույթների, ավանդույթների եւ հոգեկերտվածքի սահմանաբաժանը: Մարզի ստեղծումից հետո շրջանների միջեւ շփումներն ավելի ակտիվացան, ընդհանրություններն ավելի նկատելի դարձան: Եվ չորս մարզպետից ու մարզային մասշտաբի իշխանավորներից որեւէ մեկը (անկախ մարդկային ու գործարար հատկանիշներից) երբեք չքաջալերեց տեղայնամտությունն ու զավառամտությունը: Պարզվում է, մինչդեռ, որ տեղական որոշ գործիչներ, չունենալով ինքնադրսեւորման այլ ասպարեզ (մասնավորապես վերջերս կարկուտ չի տեղում, եւ լրատվական հարթակներում երեւալու առիթներ չեն լինում) փորձում են կիսագրագետ հայերենով, անհոգաբաշխ ու չկապակցված բառակույտերով ձեռքեր տաքացնել տեղայնամտության եւ զավառամտության անկրակ մոխրադեզի վրա:

Երբ հայտնի դարձավ նոր մարզպետի անունը, անմիջապես հնչեցին արձագանքներ: Առաջին արձագանքներից մեկը (Կապանից) սովորական կաղկանձ էր հիշեցնում՝ կարեւորն այն է, որ նոր մարզպետը գորիսեցի չէ: Ընդ որում՝ ասվում է, որ դա կապանցիների տեսակետն է: Մենք չենք կարծում, իհարկե, որ դա Կապանում իշխող տեսակետ է, եւ անբարոյակամություն է կապանցիների անունից ման հայտարարություն անելը: Բայց եթե այդպես է մտածում անգամ ինչ-որ մարդուկ, ապա անկարելի է դրան չարձագանքել: Մասնավորապես ավելի վաղ բակային մի մոլոր գործիչ էլ (Պարսկաստանից Կապան ներգաղթած հայ շինակազմի շառավիղ) կարգախոս էր հնչեցրել՝ «Կապանը՝ կապանցիներին»: Եվ բակային այդ հեղինակությունը, ըստ էության, այդպես էլ չի հասկացել, որ հռչակված կարգախոսն ու մարզկենտրոնի կարգավիճակն անհամատեղելի են:

Եթե այդ դեմարշները Սուրեն Խաչատրյան իշխանավորի դեմ կուտակված ատելության պոթեկում են, ապա, թույլ տվեք ասել, ազնիվ չեն ու անտրամաբանական են: Նախ՝ չի կարելի որեւէ մեկի անվան (որքան էլ նշանավոր լինի) եւ մի ամբողջ տարածքի ու այնտեղ բնակվողների միջեւ զուգործությունը՝ էջ 3

Փակ դռների հեպտելում

200 տարի առաջ Գորիսում կառուցվեց բանտը՝ ներկայիս «Գորիս» քրեակատարողական հիմնարկը



Արուշտ Կարամյան, «Գորիս» ՔԿՀ-ի պետ

ՀԱՅԱՅՔ ԿՈՂՔԻՑ

1812թ. կառուցված այդ շինությունը սկզբնական շրջանում ռուսական զորանոց էր եւ բանտ, իսկ 1870-ից՝ միայն բանտ: Այն ժամանակ Գորիս քաղաքը չկար, եւ բանտը կառուցվել է մեկուսի վայրում, հետո ծնունդ է առել ու զարգացել քաղաքը, իսկ բանտը հայտնվել է բնակավայրի կենտրոնում՝ շրջապատված բնակելի ու վարչական շենքերով:

Բանտը, ինչպես ժամանակակիցներն են վկայում, հատկապես 20-րդ դարի 20-ականներին ու 30-ականներին իսկական կառավարան էր: Այն, պատիժը կրելու պայմանների ծանրության առումով, տարիներ շարունակ ամենաշատ ավոր ուղղիչ հիմնարկների թվում էր ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ ԽՍՀՄ-ում:

Գորիսյան իշխանությունները դեռեւս խորհրդային տարիներին, հաշվի առնելով բանտի բացասական ներգործությունն աճող սերն-

դի դաստիարակության վրա, տարածաշրջանի քրեական իրավիճակի վրա, քանիցս փորձել են քրեակատարողական հիմնարկը հանել քաղաքի տարածքից, սակայն հաջողության չեն հասել: Այդ խնդիրը վերջին տարիներին նույնպես ծանցած է եղել տեղական ու տարածքային իշխանությունների առջեւ: Ջուզահեռաբար Գորիսում տարիներ շարունակ (մաեւ հիմա) առաջարկություններ են հնչում բանտի՝ երբեւէ ազատվող տարածքի հետագա օգտագործման վերաբերյալ: Գորիսեցիներն այդ տարածքը կցանկանային վերածել բանձարանի եւ ծաղկանոցի, ինչը, ըստ էության, հարգանքի յուրօրինակ տուրք կլիներ բոլոր այն մարդկանց հանդեպ, ովքեր, հաճախ հանրապետության տարածքում են այնտեղ կամ իրենց մահկանացուն են կնքել ազատագրվման այդ վայրում:

2009թ. հունիսի 26-ին ՀՀ կառավարության Կապանում կայացած արտագնա նիստն ընդունեց որոշում «Գորիս» քրեակատարողական հիմնարկը (Գորիսի բանտը) քաղաքից հանելու մասին: Ի դեպ, Գորիսում դա համարում են պատմական որոշում՝ կայացված վարչապետ Տիգրան Սարգսյանի հավանությամբ եւ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հետեւողական միջամտությամբ: Կառավարության նույն նիստում միաժամանակ ընդունվեց «Գորիս» ՔԿՀ-ի համար նոր շենք եւ շինություններ կառուցելու անհրաժեշտության (քաղաքից դուրս) շարունակությունը՝ էջ 4

Նոր ծրագրեր Սյունիքի պատմամշակութային հուշարձանների վերականգնման վերաբերյալ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՍԱՐԻՆ

Ճանաչված պատմաբան Գրիգոր Գրիգորյանը, հերթական անգամ գտնվելով Կապանում, բարի ավանդույթի համաձայն ասել է «Սյունյաց երկիր» խմբագրություն, որտեղ էլ պատասխանել է թերթի լրագրող Նուբար Դավթյանի հարցերին:

— Պարոն Գրիգորյան, ուրախ ենք Ձեզ կրկին տեսնել Կապանում: Ե՞րբ եք եկել և որքա՞ն ժամանակով ու ի՞նչ ծրագրերով:

— Մի շաբաթ առաջ եմ եկել, եկել եմ 33 ԳԱԱ-ի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գործուղմամբ: Հասցրել եմ լինել Վահանավանդուն: Խիստ տխրել եմ, որովհետև այդ սրբավայրն ըստ պատշաճի չի պահպանվում: Իսկ երեւանի մեր արհեստավորներն այնպիսի գներ են առաջարկում պատվիրված դռների համար, որ քաջարանցիները հրաժարվեցին վճարել՝ չորս դռան համար 12 մլն դրամ:

— Դե թող վճարեն, ինչ մի մեծ գումար է այդ ձեռնարկության համար:

— Դե թող վճարեն...

— Ձեր ծրագրերի մասին չսասցիք:

— Եկել եմ աշխատելու «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի Սյունիքին առնչվող լրացուցիչ պրակի վրա: Աշխատանքները շուտ եմ սկսել, հասցրել եմ հավաքել 600 արձանագրություն, որոնք նախորդ պրակում տեղ չեն գտել: Բայց կան դուրս մնացած այլ արձանագրություններ:

— Ի՞նչ եք կարծում՝ ե՞րբ լույս կտեսնի մատենաշարի այդ հատորը:

— Կարծում եմ՝ առաջիկայում, երբ որ հանձնենք տպագրության: Կտպագրվի պետական պատվերով: Կրկնում եմ՝ դա կլինի լրացուցիչ պրակ: Պատկերացնո՞ւմ եք, Տաթևի հարանց մեծ անապատից ոչ մի արձանագրություն տեղ չի գտել նախորդ պրակում:

— Ներողություն, պրոֆեսոր, ո՞ր անպատշաճ կատարեցիք:

— Տաթևի հարանց մեծ անապատը:

— Բայց դա Տաթևի անապատն է և ոչ թե Հարանց մեծ անապատը, որ գտնվում է Հալիձոր գյուղի դիմաց, որի արձանագրությունները տեղ են գտել մատենաշարի երկրորդ պրակում:

— Գիտեմ, հայտնի երկրաշարժից հետո անապատականները տեղա-



փոխվեցին մեր վայր՝ մի քիչ վերել և նոր անապատ հիմնադրեցին, ես այդ անապատը նկատի ունեմ, որի արձանագրությունները դուրս են մնացել, որտեղ վերջին երկու տարում քանիցս եղել եմ:

— Մեզ մեղրեցիներն արդարացի հարց են տալիս՝ այդ ինչպե՞ս է պատահել, որ նույնիսկ Արցախի վիճագրություններն են մտել առանձին հատորի մեջ, իսկ Մեղրին դուրս է մնացել Սյունիքի շրջանների առնչվող հատորից և հիմա էլ տեղ չի գտնում լրացուցիչ պրակում:

— Միանգամայն ճիշտ եք, այն ժամանակ Մեղրին փակ գոտի էր, ես մեզ հնարավորություն չտրվեց աշխատել այնտեղ: Հագիլ մի տասը-տասներկու արձանագրություն ունենք Մեղրուց: Իմ ասպիրանտը՝ ԵՊՀ դասախոս Աշոտ Մանուչարյանը, ով ծագումով Մեղրուց է, մի քանի ուսանողի հետ հավաքելու է Մեղրու տարածքի վիճակային արձանագրությունները:

— Ուրիշ ի՞նչ ծրագրեր ունեք Սյունիքի հետ կապված:

— Երիցու վանքի վերականգնման խնդիր է դրված, բայց դրանից առաջ պետք է պիտի կատարվեն: Ես առաջարկել եմ պեղումներ չպիտի կատարել, մինչև վերականգնման ստույգ երաշխիք չլինի:

— Ո՞ւմ եք առաջարկել:

— Մեր ինստիտուտի գիտական խորհրդին:

— Եվ ի՞նչ են պատասխանել Ձեզ:

— Հարցը քննարկման փուլում է, բայց մենք տեղական հեռուստալրագրողի և Կապանի թանգարանի տնօրենի հետ կզանաք այնտեղ և կմտածենք, թե որտեղից պետք է

սկսել աշխատանքը:

— Կներեք, բայց մենք հարցին շատ լուրջ ենք վերաբերում, ի՞նչ կապ կարող են ունենալ լրագրողն ու թանգարանի տնօրենը, եթե խոսքը պեղումների ու վերականգնողական աշխատանքների ծրագրավորման մասին է:

— Երբ որոշեցի գալիս է հաղորդում պատրաստելու, իսկ ես պետք է ասեմ, թե որտեղ է երիցու թաղման կարծեցյալ վայրը:

— Այսինքն ճանաչողական ա՞յց եք կատարում Երիցու վանք:

— Այո: Նաև պետք է մեր գիտ-խորհրդին տեղեկացնեմ, թե ինչ վիճակ է այնտեղ տիրում:

— Պարոն Գրիգորյան, հիշո՞ւմ եք 2002-03 թվականները, երբ «Սյունյաց աշխարհ» թերթում բանավեճ ծավալվեց Ձեր և Սերգեյ Հախվերդյանի համահեղինակությամբ հրատարակված «Սյունիքի պատմություն» գրքի շուրջ: Հիմա նորից մասնագետները պահանջում են քննարկել այդ գիրքը: Գտնում են նաև, որ չի կարելի այդ գիրքը դարձնել բուհական ձեռնարկ: Որպես գրքի համահեղինակ, տարիներ անց ի՞նչ կարծիք ունեք այդ գրքի մասին:

— Ես մնում եմ նույն կարծիքին՝ այդ գիրքը պետք է հրատարակվեր:

— Խոսքը տպագրվել-չտպագրվելու մասին չէ: Խոսքն այն մասին է, որ բազում վրիպակներով ու սխալներով գիրքը չի կարող բուհական ձեռնարկ լինել:

— Մի վրիպակ ասեք:

— Ոչ թե մեկ, այլ հարյուր վրիպակ է մատնանշվել 2002-03թթ. բանավեճի ժամանակ: Ինչե՞տ, Դուք դե՞մ կլինեք, որ այդ գրքի շուրջ նոր բա-

նավեճ ծավալվի:

— Իհարկե նորմալ եմ համարում: Բոլոր դիտողությունները, վրիպակները պետք է նկատի ունենալ և վերահրատարակել այդ գիրքը: Առողջ բանավեճից գիրքը միայն կշահի:

— Հարգելի՛ պրոֆեսոր, կուզենա՞յինք լսել Ձեր կարծիքը «Սյունյաց երկիր»՝ Վահանավանդին նվիրված համարի մասին: Կուզենա՞յինք նաև Ձեր դիտողությունները լսել:

— Ես եւ ակադեմիական շրջանակի իմ բարեկամները կուզենայինք կատարված աշխատանքը տեսնել ոչ թե թերթի, այլ գրքի տեսքով:

— Դա տեխնիկական հարց է և չենք կարծում, որ հարյուր էջը շատ է թերթի համար, մանավանդ որ աշխարհում շատ թերթեր լույս են տեսնում մինչև 300 էջ ծավալով: Ուրիշ ի՞նչ դիտողություն ունեք:

— Ինչ դիտողություն մասին է խոսքը, դա երեւոյթ է ամբողջ հայ իրականության մեջ:

— Մենք տեղեկություններ ունենք, որ նաև Բաղաբերդի հետ կապված ծրագրեր ունեք:

— Այո, բայց ինչպես երիցու վանքի, այնպես էլ Բաղաբերդի պարագայում՝ նախ պետք է ունենալ ստույգ երաշխիք, որ բերող կվերականգնվի: Եթե հուշարձանը չի վերականգնվելու, ապա ուրեմն չպետք է ձեռք տալ: Իսկ ես ուզում եմ, որ Բաղաբերդը վերականգնվի՝ որքան էլ վիճելի է այդ ամբողջ գտնվելու իսկական վայրը: Ի դեպ, վերջերս երեք ճարտարապետ էր եկել Բաղաբերդ նախագծման աշխատանքը կատարելու համար:

— Դուք նաև Վահանավանդի հետ կապված կիսատ ծրագրեր ունեք, ուզում էիք Աստուծո այդ տաճարը հանձնել Մայր աթոռի տնօրինությանը:

— Մայր աթոռը հրաժարվեց:

— Ինչո՞ւ:

— Չգիտեմ, բայց պետք է, այնուամենայնիվ, հետամնու լինել, որ Վահանավանդն անցնի Մայր աթոռի տնօրինության տակ, եւ այնտեղ հոգեւոր սպասավորներ աշխատեն, հոգեւոր արարողություններ կատարվեն, մի խոսքով՝ Վահանավանդը պետք է դարձնել գործող վանահայրություն: Իսկ դա կարող է իրականություն դառնալ միայն ու միայն Մայր աթոռի բարձր տնօրինությամբ:

— Պարոն Գրիգորյան, շնորհակալություն հարցազրույցի համար, Ձեզ հաջողություններ նոր ծրագրերի իրագործման ճանապարհին:

27 հունիսի 2013թ.

Լուրեր

Վ 374 գործադիր մարմնի հուլիս 4-ին կայացած նիստում, Սերժ Սարգսյանի առաջարկությամբ, միաձայն որոշում է ընդունվել Սյունիքի մարզպետի պաշտոնում նշանակել N38 ընտրատարածքից Աժ պատգամավոր Վահե Հակոբյանին:

Վ Կապանի նախկին քաղաքապետ Արտուր Աթայանը «Սյունյաց երկիր» լրագրողի հետ զրույցում չի բացառել, որ ինքը N38 ընտրատարածքում կառավարողի Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու:

Վ Յունիսի 28-ին Կապանի N3 միջն. դպրոցում տեղի ունեցավ 33 նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի երկրորդ՝ մարզային փուլը: Մինչ երկրորդ փուլի մեկնարկը դրամական պարգևներ ստացան առաջին փուլում մրցանակային տեղեր զբաղեցրած ընտանիքները: Միջոցառմանը ներկա էր 33 սպորտի երիտասարդության հարցերի նախարարության մասնապետը՝ սպորտի բաժնի պետ Սուրեն Պրազյանը, ով նշեց, որ մրցույթի հորեյանական՝ 10-րդ տարին է եւ երբ 2004թ. այն մեկնարկեց՝ մասնակցում էր ընդամենը 56 ընտանիք, իսկ այս տարին՝ 2041: Նա մասնակիցներին մաղթեց հաջողություն՝ ցանկանալով, որ հաղթի ուժեղագույնը եւ Ծաղկածորում, մասնակցելով կանխավետական փուլին, բարձր պահի Սյունիքի պատիվը: Նշեց, որ մրցույթին մասնակցում էին չորս տարիքային խմբի ընտանիքներ, որոնցից յուրաքանչյուր խմբում առաջին, երկրորդ և երրորդ տեղ զբաղեցրած ընտանիքները հնարավորություն ստացան մասնակցելու հանրապետական փուլին, որը տեղի կունենա Ծաղկածորում օգոստոսի երկրորդ տասնօրյակում:

Վ Յունիսի 29-ը հանրապետությունում նշվում է որպես անհայտ ճակատագրով մարտիկի օր: Արցախյան պատերազմի կապանցի 18 մասնակցի ճակատագրի մասին մինչև այսօր ոչինչ հայտնի չէ: Հունիսի 28-ին Բաղաբերդի հուշահամալիրի այցելեցին Սյունիքի մարզպետի տեղակալ Վահե Գրիգորյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, Կապանի զինվոր, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը, «Ազատամարտ» կոմիտեի նախագահ Խորեն Հարությունյանը, նախկին ազատամարտիկներ, անհայտ ճակատագրով ազատամարտիկների ընտանիքների անդամներ, հարազատներ: Անհայտ զինվորի խաչքարին ծաղիկներ դրվեցին, հուշեր պատմվեցին, եղան սփոփանքի խոսքեր, որոնք ունեն մի ձեւակերպում՝ հույսը վերջինն է մեռնում:

Վ Յայաստանի ֆուտբոլի նախորդ առաջնության բրոնզե մեդալակիր Կապանի «Գանձասար» եվրալիգայի խաղարկության առաջին փուլում հուլիսի 4-ին հանդիպեց Դազախստանի «Ակտոբե» թիմի հետ: Նախախաղյա մամուլի ասուլիսում «Գանձասարի» մարզիչ Սեւադա Արզումանյանն ասել էր, թե «Գանձասարը» նախատեսել է հարթահարել եվրագավաթի խաղարկության մեկ-երկու փուլ: Բայց խաղարկչություն ծավալված իրադարձություններն այլ բան վկայեցին: Առաջին խաղակեսում գոլ չգրանցվեց: Իսկ ահա երկրորդ կեսում դազախական ֆուտբոլի առաջատար երկու անգամ գրավեց «Գանձասարի» դարպասը: Եվ միայն ավելացված ժամանակում կապանցիներին հաջողվեց կրճատել հաշվի տարբերությունը: Այսպիսով, «Գանձասարը» 1:2 հաշվով պարտություն կրեց և պատասխան խաղից առաջ հայտնվեց ծանր կացության մեջ:

Ե՛վ ավարտական քննություն, Ե՛ւ դասական երաժշտություն

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կապանի արվեստի պետական թուղթում պետական-ավարտական քննությունները հետևում մնացին: Այս ուստարում կրթօջախն ավարտեց 29 շրջանավարտ՝ թուղթում դասավանդվող համարյա բոլոր մասնագիտությունների գծով, բացի գեղանկարչությունից: Քննություններից մի քանի օր առաջ (մայիսի 31-ին) տեղի ունեցավ թուղթի ուսանողների հաշվետու համերգը, իսկ հունիսի 1-ին երեխաների պաշտպանության միջազգային օրվա շրջանակում կազմակերպվել էր «Դիզայն» և «Գեղանկարչություն» բաժինների սովորողների աշխատանքների ցուցահանդես, որում ներկայացված էին

դիզայներական և գեղանկարչական աշխատանքներ: Եվ հաշվետու համերգը, եւ ցուցահանդեսը որոշակի պատկերացում տվեցին անցած ուստարում նրանց ձեռքբերումների մասին: Բայց այս անգամ «Սյունյաց երկիր» հետաքրքրում էր, թե ինչպես անցան պետական-ավարտական քննությունները, ինչ պատրաստակամություն ունեին քննվողները: Այս եւ խնդրո առարկային առնչվող այլ հարցերի շուրջ զրուցեցինք թուղթի պետական դրակավորման հանձնաժողովի նախագահներ 33 ժողովրդական արտիստուհի, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Անժելա Աթաբեկյանի և 33 արվեստի վաստակավոր գործիչ, կոնսերվատորիայի պրոֆեսոր Սերգեյ Քեչեկի հետ: Ինչպես

նաև քննություններին վերաբերող որոշ նկատառումներ խնդրեցինք հայտնել թուղթի տնօրեն Լիաննա Հակոբյանին:

Սերգեյ Քեչեկ: Այս անգամ ինձ մոտ քննություն է հանձնել «Դաշնամուր» մասնագիտության երեք, «Երգեցողություն» երկու, «Խմբավարություն»՝ երեք շրջանավարտ: Համեմատաբար լավ տպավորություն թողեցին դաշնակահարները: Այդ դասարանում տեղի է ունեցել մանկավարժների սերնդափոխություն, երիտասարդ դասավանդողների նվիրված աշխատանքը տվել է իր պտուղները: Ու՞ր շրջանավարտից աչքի ընկավ «Դաշնամուր» մասնագիտացման շրջանավարտ Ալիսեն Բաբալարյանը (դասատու՝ Մարինա Նահապետյան), ով երեք պետական

քննությունից ստացավ ինը, կամ, որ միեւնույն է, «գերազանց» գնահատական: Քանի որ թուղթն ավարտեց գերազանցությամբ դիպլոմով, մենք նրան երաշխավորագիր տվեցինք միանգամից՝ կոնսերվատորիայի երկրորդ կուրս ընդունվելու համար, իհարկե, հանձնելով որոշ առարկաների տարբերություններ: Կուզեի առանձնապես նշել դասախոսական անձնակազմի ներդրած ջանքերը միջին ընդունակություններով օժտված ուսանողների լավ արդյունքի հասցնելու ուղղությամբ: Հենց նոր ավարտվեց «Խմբավարություն» բաժնի ուսանողների քննությունը: Այս անգամ մտահոգիչ էր նրանց պատրաստվածության մակարդակը: Դա երկու գործոնով է պայ-

Շարունակությունը՝ էջ 8



Վերածվեց Սուրբ Հակոբեկեղեցին

Հունիսի 29-ին Քաջարան գյուղի Սբ Հակոբեկեղեցին փաստաբաններ հետ կրկին վերաբացեց դռները հավաքացյալների առջև: Եկեղեցու վերածման արարողությանը մասնակցում էին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանը, թեմի կրոնական դասի ներկայացուցիչներ, փարածաշրջանի համայնքի ղեկավարներ, հյուրեր, եկեղեցու վերականգնման օժանդակած անձինք: Վերածման արարողության համար պարտադիր է հոգևոր դասից որևէ եպիսկոպոսի ներկայությունը: Վերածումն իրականացրեց, օրհնության կարգ կատարեց և խաչն օրհնեց գերաշնորհ Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը՝ հրավիրված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Խաչն օրհնելուց հետո մատուցվեց սուրբ պատարագ:

մերժության տարիներին ոչ թե նման կառույցների ճակատագիր բաժին ընկավ (օգտագործվեց որպես պահեստ), այլ ծառայեց որպես Քաջարան գյուղի ակումբ: Ինչպես վկայում են գյուղի տարեցները, այդտեղ ինքնագործ խումբ էր գործում, ֆիլմեր էին ցուցադրվում, ժողովներ անցկացվում: Միայն երեք տարի առաջ մի խումբ նախամախնդիրներ ձեռնամուխ եղան կիսաքանդ կառույցի վերականգնմանը: Մանվել Փարամազյանը եկեղեցու վերականգնման ջատագովներից է, դրամական զգալի ներդրում է արել (ընկերների հետ միասին 10 մլն դրամ) կառույցի վերաշինման, նրա տարածքի բարեկարգման և կանաչապատման գործում, բայց հորդորեց, որ նշվի նաև գյուղի կարեւոր կառույցից երկրորդ կյանք պարգևատրվելու իրենց նպատակը բերած ընկերների անունները՝ Սեմիկ Չեյնալյան, Գարիկ Ղազարյան, Շանթ Թումանյան, Արմեն Անդրեասյան, Կարեն Ղազարյան:



Եկեղեցու վերականգնման համար 20 մլն դրամ հատկացրել է «Ձանգեզուրի ՊՍԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանը, 4 մլն դրամ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանը, մեծ մասը Քաջարան գյուղացիների հանգանակությունն է: Արարողությանը մասնակցում էր նաև ճարտարապետ Ստեփան

17-րդ դարի կեսերին կառուցված եկեղեցուն խորհրդային աստվածա-

Վրանգավոր անումալիա

Տեղայնամտությունը՝ մարտնչող տգետների նոր հանգրվան

ՌԵՊՈՒԿ

Սկիզբը՝ էջ 1

դություն անցկացնել (այդպես չի լինում): Եվ երկրորդ՝ Սուրեն Խաչատրյանն անցած տասը տարում (անկեղծ լինեմք) այսուհիջան ոչ մի շրջանում այնպես չի փառաբանվել ու մեծարվել, որքան Կապանում: Հենց Կապանում է նա ստացել հայոց մարզպետաց մարզպետ, Սյունիքի թագավոր հորջորջումները, Կապանի «էլիտայի» կողմից է շրջանառության մեջ դրվել արտահայտությունը, թե իբր Սյունիքի մարզի համար նա ավելին է արել, քան մայրաքաղաքը մարզպետը միասին վերցրած (այդ արտահայտությունների հեղինակների անունները կարող ենք մշել): Ի վերջո չկար իշխանական մի համդիսույթ, որի մասնակիցներն իրենց պարային հմտությունները չցուցա-

դրեին մեծն Գուսանի «Ձանգեզուրի չոր չուրը ծողկել են» երգի մեղեդու ներքո և չունկնդրեին «Սյունյաց սարեր» երգը, որը, կարծեք, Սյունիքի յուրօրինակ օրհներգ էր դարձել: Մարզկենտրոնում չկար մի համույթ, որի երգացանկում չլիներ Գուսան Աշոտի երգերը: Իհարկե, քանիցս հրապարակված ծաղրել ենք այդ բարքերը՝ համարելով դրանք մարզպետին հաճոյանալու քայլեր (և միայն «Սյունյաց երկիր» է պարսավել դրանք): Երբեմն, սակայն, տարակուսել ենք՝ այսքան քծնանք չի կարող բնութայան մեջ լինել, միգուցե դա մարդկանց անկեղծ ձգտումն է՝ հաղորդվելու Գուսան Աշոտի երգարվեստին... Եվ ընդամենը մեկ ամիս հետո, գրեթե նույն մարդիկ, պիղուցե դա մարդկանց ձեռքերն են վճանում ու հակառակը ցուցանում:

Իսկ եթե հակագործիսյան հիստերիան պայմանավորված չէ մայրող մարզպետի անձով, ապա դա ավելի մտահոգիչ է: Տեսե՛ք՝ եւ 2004-ին, եւ 2007-ին, երբ Վահե Հակոբյանը կաննում էր դառնալ ԱԺ պատգամավոր, նրա քարոզչական շտաբը տեղի-ամտեղի հիշեցնում էր, որ թեկնածուն մայրական կողմից սերուն է Գորիսից: Եվ դա համարում էին արժանիք: Քանի-քանի անգամ տարիների ընթացքում լսել ենք (և շարունակում ենք լսել), որ գորիսյան հոգեւոր-մշակութային ավանդույթները բացառիկ են, ակնհայտ ազգային: Քանի-քանի անգամ տարիների ընթացքում լսել ենք (և շարունակում ենք լսել) օրհնանք առ Գորիս, որի արգանդն ազգային մեծերի մի ամբողջ բույլ է նվիրել հայ ժողովրդին: Քանի-քանի անգամ փառաբանության ու մեծարանքի խոսքեր

ենք լսել (և շարունակում ենք լսել) գորիսյան ստեղծագործ ոգու, ըմբոստության, աշխատասիրության, հնարամտության, երկրին և հող ու ջրին նվիրվածության, պատվախնդրության մասին: Եվ հիմա՝ մի երկու ծրտոտ վառել, մի քանի բակային մոլոր գործիչ ու սիլուետ-լրագրող բացակաչում են՝ միայն թե գորիսեցի չլինի Սյունիքի մարզպետը: Իհարկե, շատ անոթ է, որ 21-րդ դարում փոքրիկ Հայաստանում տեղայնամտության բարձրացված դրոշմ իջեցնելու խնդիր է ծառայել մեր առջեւ, բայց... Տեղայնամտության ներկա շքերթը մի քանի պարզ նպատակ ունի: Նախ՝ նորանշանակ մարզպետին (իբր թե բարձրացնելով) ներքաշել տեղային «ռազբորկաների» մեջ՝ լավ հասկանալով, որ բնության մեջ նաև բուսականի օրենք գոյություն ունի և այդ օրենքի գործողությամբ կապանյան կոչերը կարող են հակադարձվել Գորիսում: Երկրորդ՝ կան մարդիկ, ովքեր որևէ այլ ոլորտում ի վիճակի չեն ինքնադրսերովելու և ընտրել են տեղայնամտությունը՝ կարծելով, թե դա հերոսանալու, հանրությանը հայտնի դառնալու ամենակարճ ճանապարհն է, կար-

ծելով, թե մարզը և հատկապես մարզկենտրոնն այլևս մի անկաղմի բացատ են, ուր թույլատրելի է ամեն ինչ (հիշեցնեմք՝ տեղայնամտությունն ու փոքր հայրենիքի համդեպ բնական սերը միանգամայն տարբեր երեւույթներ են): Եվ ամենազարմանալի՝ հակագործիսյան հիստերիայի ողորմելի վարժանքների մեջ աչքի են ընկնում գորիսյան արմատներով մեկ-երկու կապանցի, ովքեր, սպառած լինելով ինքնահաստատման բոլոր հնարքները և այլևս պահանջված չլինելով, փորձում են նոր իրավիճակում նման ճղճղոցով մեջլիս մտնել՝ մոռանալով, որ ավելի ժանգոտ են դառնում, քան էին: Մի բան էլ՝ որքան էլ տեղայնամտության ու գավառամտության հրավառությունը թեժանա, միեւնույն է՝ դրանից Գորիսի համընդհանուր ընկալումը, գորիսեցու կերպարի ընկալումը՝ դարերով ձեւավորված, մագաչափ անգամ չեն աղավաղվելու: Պարզապես քաղաքացիական համերաշխությունն է ավելի երերալու երկրամասում, իսկ մարզային իշխանությունը վերջնականապես հայտնվելու է խաղից դուրս վիճակում, եթե արդեն չի հայտնվել: ՍԱՍՎԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ



«Գորիս» ԲԿԿ-ի վարչական շենքը

Լուսանկարը Կ. Հովհաննիսյանի

Փակ դռների հեքիներում

200 տարի առաջ Գորիսում կառուցվեց բանտը՝ ներկայիս «Գորիս» քրեակատարողական հիմնարկը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՔԻՏ

Սկիզբն էլ 1

մասին առաջարկը: Հանձնարարվեց արդարադատության նախարարությանը քաղաքաշինության նախարարության հետ կատարել քրեակատարողական հիմնարկի նոր շենքի եւ շինությունների նախագծանախաշվային փաստաթղթերի պատրաստման անհրաժեշտ տեխնիկական աշխատանք: Կառավարությունը համապատասխան հանձնարարություն տվեց ՀՀ ֆինանսների նախարարությանը աշխատանքները ֆինանսավորելու համար: 2010թ. հունվարի 14-ին ՀՀ կառավարությունը հաստատեց «Գորիս» ԲԿԿ-ի նոր շենք-շինությունների կառուցման նախագծանախաշվային փաստաթղթերի մշակման տեխնիկական առաջարկը: Գորիսի նոր ԲԿԿ-ի կառուցման համար նախատեսվում էր հատկացնել (արդեն իսկ հատկացվել է) 10.6հա ընդհանուր տարածք Գորիս քաղաքից 8կմ դեպի Խնձորեսկ ընկած հատվածում: Նոր ԲԿԿ-ն նախատեսված է 320 կալանավորված անձ եւ դատապարտյալ պահելու համար (երկու անգամ ավելի, քան հիմա): Բայց մինչեւ այժմ նոր ԲԿԿ-ի կառուցումը չի մեկնարկել, իսկ 2012թ. օգոստոսի 11-ի երկրաշարժի հետևանքով ԲԿԿ-ի գործող շենքերի մեծ մասը ծանաչվել է վթարային, ինչից հետո հիմնարկի բեռնվածությունն իջեցնելու գործելակերպ է որոշվել: Ըստ էության «Գորիս» ԲԿԿ-ն ժամանակակի ընթացքում կվերածվի միայն քննչական մեկուսարանի (ոչ վթարային մեկ շենքի օգտագործմամբ) մինչեւ ԲԿԿ-ի նոր շենքի կառուցումը:

Ներկայումս «Գորիս» ԲԿԿ-ն (ուղղիչ հիմնարկների տեսակների առումով) փակ ուղղիչ հիմնարկ է, ինչը նշանակում է, որ այնտեղ պահվում են առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվածներ: Սակայն, ինչպես տեղեկացրեց ԲԿԿ-ի պետ Արտուշ Մաքունցը, ներկայումս կիրառվում է ունիվերսալության սկզբունքը: Եվ «Գորիս» ԲԿԿ-ն նաեւ կիսափակ (10 տեղ), կիսաբաց (10 տեղ) եւ բաց (50 տեղ) ուղղիչ հիմնարկների գործառնություններն է: «Գորիս» ԲԿԿ-ում պահվում են մոտ 100 դատապարտյալ ու կալանավորված անձ (դրանց թիվը, բնակամասը, անընդհատ փոխվում է): 35-ը կալանավորված է, մնացած-

ները՝ դատապարտյալներ, որոնցից 10 հոգի Նոնաձորի բաց ուղղիչ տեսակի տեղափոխվելու համար, ինչը հոգի տեխնիկատնտեսական ոլորտի սպասարկող է (աշխատանքի դիմաց վարձատրվելով), մյուսները պատիժը կրում են փակ եւ կիսափակ ուղղիչ հիմնարկների համար սահմանված պայմաններում:

Դատապարտյալների միջին տարիքը 45 է: Կալանավորվածների մեծ մասը գինվորական է: Ամենակրտսեր դատապարտյալը 21 տարեկան է (ազատագրվել է դանակահարության համար), ամենատարեցը՝ 61 տարեկան: Ամենամեծ պատժաչափը, որ կրում է դատապարտյալներից մեկը, 14 տարի ազատազրկումն է: Երեք հոգի հաշմանդամ է: Անչափահասներ, օտարերկրացի քաղաքացիներ եւ ցմահ դատապարտվածներ այս պահին ԲԿԿ-ում չկան:

Խմբագրությունում «Գորիս» ԲԿԿ-ի գործունեության վերաբերյալ բազմաթիվ հարցեր են կուտակվել: Դրանք թերթային մեկ հրատարակման մեջ, անշուշտ, հնարավոր չէ արծարծել: Հարցերի մի մասը, այնուամենայնիվ, փորձեցինք պարզել ԲԿԿ-ի պետ Արտուշ Մաքունցի հետ հարցազրույցում, որ տեղի ունեցավ հուլիսի 1-ին ԲԿԿ-ի պետի աշխատասենյակում:

Դատապարտյալների հետ չհանդիպեցինք, քանի որ, ըստ ԲԿԿ-ի ղեկավարների, ոչ ոք չէր ցանկացել (բացառությամբ մեկ հոգու) շփվել լրագրողների հետ: Իսկ այդ մեկ հոգու՝ լրագրողների հետ շփվելու կամեցողությունը կարող էր եւ չհասկացվել ընկերների կողմից՝ դրանից բխող հետեւանքներով, ինչի համար էլ գերադասեցինք չզրուցել սիսիանցի այդ դատապարտյալի հետ (չենք բացառում մինչդեռ, որ դատապարտյալների հետ մեր հանդիպումը չկայացավ վարչակազմի նախաձեռնությամբ):

– Պարոն Մաքունց, ՀՀ կառավարության 2010թ. մարտի 18-ի որոշմամբ դադարեցվեց «Մեղրի» քրեակատարողական հիմնարկի գործունեությունը, եւ այն վերակազմակերպվեց որպես «Գորիս» ԲԿԿ-ի տեղամաս: «Գորիս» ԲԿԿ-ին վերապահեցին նաեւ բաց տեսակի ուղղիչ հիմնարկի գործառնությունները: Բաց տեսակի ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալները տեղակայված են Նոնաձոր գյու-

ՄԱՅՆԱՑՈՒՄ

Արտուշ Մաքունց. ծնվել է 1958թ. Խնձորեսկում: Գյուղի միջնակարգն ավարտելուց հետո ծառայել է խորհրդային բանակում (1976-78թթ.): 1978-ից աշխատանքի է անցել Գորիսի բանտում՝ գրադարանավար, հսկիչ, ապա... 1999-2009թթ. եղել է «Մեղրի» ԲԿԿ-ի պետ: 2009-ից մինչեւ հիմա «Գորիս» ԲԿԿ-ի պետն է: 1986-90թթ. սովորել է (առանց աշխատանքից կտրվելու) Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղում եւ ստացել բարձրագույն կրթություն: Արդարադատության գնդապետ է: Ունի երեք զավակ:

դում, որտեղ եւ մասնակցում են գյուղատնտեսական աշխատանքների: Բայց այդ տեղամասի գործերի վիճակը չէ, որ այս պահին մեզ հետաքրքրում է: Գարնանը եղել ենք Նոնաձորում: Պարզվում է՝ Ձեր ղեկավարած ԲԿԿ-ին է հանձնված այդ համայնքի գյուղատնտեսական նշանակության 148հա հող, որից 82հա ոռոգելի է, որը հնարավոր չէ լիարժեք մշակել այնտեղ պատիժը կրող 10 դատապարտյալով: Գյուղապետը մեզ համոզում էր, որ մեկ հոգին կարող է մշակել ընդամենը 5000 քմ տարածք: Միաժամանակ ԲԿԿ-ն ազատված է հողի հարկից, ինչից տուժում է համայնքը: Ինչպե՞ս եք վերաբերվում այնպիսի, եթե նշված հողատարածքները (կամ որոշ մի մասը) վերադարձվեն համայնքին որպես համայնքային սեփականություն՝ ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով:

– Ես անձամբ դեմ եմ հողատարածքները համայնքին վերադարձնելու առաջարկին, բայց իմ դիրքորոշմամբ չէ, որ պետք է որոշվի դրանց հետագա օգտագործման ճակատագիրը: Հողերը պատկանում են «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամին, որի նախագահն արդարադատության նախարարն է: Այդ հողերը «Մեղրի» ԲԿԿ-ին են տրվել 1994-ին, երբ հիմնադրվում էր ԲԿԿ-ն: Հետագայում՝ հայտնի բարեփոխումների ժամանակ, տարածքի ենթակայությունն է փոխվել: Այնտեղ աշխատում են դատապարտյալներ, ովքեր իրենց պատիժը պետք է կրեն բաց ուղղիչ հիմնարկում: Ներ-

կայումս տասը մարդ է աշխատում, վաղը կարող է թիվը փոխվել: Հիմա, որքանով տեղյակ եմ, տարածքի օգտագործման արդյունավետության բարձրացման խնդիր է դրված: Այնտեղ, հավանաբար, բնակվելու պայմաններ կստեղծվեն մարդկանց համար, ովքեր պատիժը կրելուց հետո բնակվելու այլ տեղ չեն ունենա: Խոսքը միայն մեր հիմնարկից ազատվածների մասին չէ: Նոնաձորում ԲԿԿ տեղակայվել է սկզբանե բնակեցման խնդիր է հետապնդել նաեւ: Խնդիրը, իհարկե, չի լուծվել, բայց մնացել է օրակարգում: Նախկին ազատագրվածներից այնտեղ միայն երկու հոգու ընտանիք է բնակվում:

– Ամեն ինչ ճիշտ է, բայց, ի վերջո, ի՞նչ է ստանում «Գորիս» ԲԿԿ-ն կամ «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը 82հա ոռոգելի եւ բացառիկ արդյունավետ այդ հողերից: Նոնաձորում մարդիկ նույնիսկ իրենց փոքրիկ տնամերձից են բերք ստանում, եկամուտ ունենում. իսկ Դուք... Եվ, միաժամանակ, հնարավոր չէ պատկերացնել, որ տասը դատապարտյալ ի վիճակի է մշակել 82հա ջրովի հողատարածքը (մնացած հողերի մասին չենք խոսում): Հնարավոր չէ պատկերացնել նաեւ, որ ջրովի ու բերրի այդ հողերը ոչ ոք չի մշակում:

– Ես ստույգ չեմ կարող ասել, թե ինչ եկամուտ է ստացվում այդ հողատարածքից: Միգուցե հարցին պատասխանի «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը:

– Վերջին տարիներին «Գորիս» ԲԿԿ-ն քանիցս հայտնվել է աղմուկահարույց պատմությունների մեջ: 2009թ. հոկտեմբերին ձերբակալվեցին ԲԿԿ-ի պետ Արմեն Դեղրոսյանը, պետի տեղակալ Կարո Ջաղապանը, հիմնարկի բուժապասարկման մասնագետը... Մոտ երկու տարի առաջ ձերբակալվեց բանտապետի տեղակալ Մարեն Հարությունյանը: Ավելի շուտ արձանագրվել էին թմրամիջոցների ներկրման, բանտարկյալների փախուստի դեպքեր: Բոլոր այդ փաստերը վկայում են, որ «Գորիս» ԲԿԿ-ն կոռուպցիայի եւ հանցավորության առումով ավելի քան ռիսկային է: Նախ՝ ինչո՞ւ է բացատրվում այդ ռիսկայնությունը, երկրորդ՝ ի՞նչ է անում (ծեռնարկում) ԲԿԿ-ի վարչակազմը, որպեսզի մեծ դեպքերը բացառվեն կամ նվազագույնի հասցվեն:

– Ցավալի է, որ մեր ԲԿԿ-ում մեծ միջադեպեր են նախկինում արձանագրվել: Մենք էլ մեզանից կախված ամեն ինչ անում ենք, որ այդպիսի դեպքեր այլևս տեղ չգտնեն մեզանում: Նման դեպքեր, իհարկե, տեղ են գտնում մեր կյանքի մյուս ոլորտներում եւս, բայց դա մեզ չի հանգստացնում ու մխիթարում...

– 2003թ., եթե չենք սխալվում, ԲԿԿ-ները (այդ թվում «Գորիս» ԲԿԿ-ն) անցան արդարադատության նախարարության ենթակայության տակ (մինչ այդ ստիպանական համալրագում էին): Հետագայում էլ սկզբունքային ի՞նչ փոփոխություն տեղի ունեցավ ենթակայության փոփոխության արդյունքում:

– Այդ փոփոխությունը պայմանավորված էր համակարգում իրականացված բարեփոխումներով, եվրոպական չափանիշների որդեգրմամբ: Ենթակայության փոփոխությունը միայն բառերի, տերմինների փոփոխությունն է, որ բերել է: 36 տարի է, ինչ աշխատում եմ այս համակարգում: Հավատացե՛ք, քրեակատարողական այսօրվա հիմնարկը չես համեմատի մի քանի տարի առաջ եղածի հետ:

– Ֆինանսավորման սկզբունքը... Ի՞նչ արժե դատապարտյալի մեկ օրը պետության համար (պատիժը կրելու մեկ օրվա զինը):

– Մեկ դատապարտյալի մեկ օրվա ծախսը մոտ 3700 դրամ է (դա բոլոր ծախսերի համագումարն է): Բայց անվերջ չէ լինի, եթե ասեի, որ

հատկացվող ֆինանսական միջոցները բավարարում են առկա խնդիրները պատշաճ լուծելուն: Չգտնում ենք տեղավորվել հատկացումների մեջ հասկանալով, որ պետությունն առայժմ այդչափ կարող է ֆինանսավորել: Ճիշտ է, հիմա կարգերի՝ քրեակատարողական ծառայողների, կարիք չունենք, ինչպես նախորդ տարիներին, բայց աշխատավարձն էլ մեզանում զգալիորեն ցածր է համեմատած ոստիկանության, բանակի անձնակազմի աշխատավարձերի հետ: Ի դեպ, եթե մեզ մոտ միայն քննչական մեկուսարանը, ապա կլինի աշխատատեղերի կրճատում:

– Քրեակատարողական ծառայողի կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ եւ զենք գործադրելու դեպքեր ունե՞ք (ասենք՝ վերջին մեկ տարվա կարգվածով): Ինչպե՞ս է դա վերահսկվում:

– Նման դեպքերը վերահսկվում են ամենայն խստությամբ եւ գրանցվում են դրանից բխող բոլոր հետեւանքով: Բարեբախտաբար, Ձեր նշած ժամկետում այդպիսի միջոցների դիմելու կարիք չենք ունեցել: Իսկ իմ ծառայության տարիներին երբեք զենք կիրառելու անհրաժեշտություն չի եղել: Ուզում եմ հավատացնել՝ դատապարտյալների, կալանավորված անձանց գիտակցությունը, օրինապահությունը էլ է բարձրացել, եթե համեմատենք նախորդ ժամանակների հետ: Մենք դատապարտվածների շրջանում նաեւ բացատրական աշխատանք ենք կատարում:

– Քրեակատարողական ոլորտի օրենսդրությանը, իրավական ակտերին ծանոթանալիս, հաճախվում ենք, որ գրեթե բոլոր հարցերը թղթի վրա ունեն ցանկալի լուծում, որ քրեակատարողական ոլորտը հենվում է մարդասիրության, օրինականության, օրենքի առջև դատապարտյալների հավասարության եւ այլ ցանկալի սկզբունքների վրա: Իրականում, սակայն, հանրության մեջ կա ԲԿԿ-ում տիրող բարքերի միանգամայն այլ՝ խիստ բացասական ընկալում. դա ոչ միայն Գորիսում, այլեւ՝ ամենուր: Ինչո՞ւ եք դա բացատրում:

– Ինչ-որ տեղ օրինաչափ ու բացատրելի է, որ ազատազրկման վայրերը հանրության մեջ բացասական ընկալում ունեն: Դրա արմատները պետք է փնտրել նախորդ ժամանակների խորքերում: Հիմա, տեսնում եմ, աստիճանաբար փոխվում են պայմանները, մարդկային հարաբերությունները:

– Օրենքը՝ օրենք, բայց հանրության մեջ կա կարծիք (եւ դա նոր չէ), որ քրեակատարողական հիմնարկներում գործում է նաեւ չզրկված օրենք, որը ներքին կյանքում ավելի մեծ դեր է խաղում, քան գրված ու կիրառվող օրենքը: Հանրությունը երբեմն նույնիսկ դրակասործն է վերաբերվում ներքին օրենքներին, հեղինակությունների ինստիտուտին, որը, իբր, կարգուկանոնի ու մարդկանց անվտանգության ոչ պակաս երաշխիք է: Ի՞նչ կասեք այդ մասին:

– Չափազանցված են այդ բնույթի խոսակցությունները: Ազատազրկման վայրի թիվ 1 հեղինակությունը պետք է լինի ուղղիչ հիմնարկի պետը, այլապես շատ խնդիրներ կծագեն: Իսկ առիասարակ հեղինակություն ասվածն էլ հարաբերական հասկացություն է:

– Տարիներ շարունակ Գորիսում լսում ենք շրջանառվող տեսակետ առ այն, որ բանտը (քրեակատարողական հիմնարկը) բացասական ազդեցություն է գործում Գորիսի քրեական իրավիճակի, անող սերնդի դատախարակության վրա: Մեկ այլ կարծիք էլ է շրջանառվում՝ իբր բանտը (համեմատ առանձին հեղինակություններին) ի գործ է միջամտելու համայնքի ներսում ընթացող գործընթացներին, մարդկային ինչ-ինչ հարաբերությունների պարզաբանմանը, անգամ

Շնորհանդես էր եւ մրցանակաբաշխություն

Կապանի մշակույթի կենտրոնում հունիսի 26-ին տեղի ունեցավ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության «Տարվա լավագույն աշխատակից» ավանդական դարձող մրցանակաբաշխությունը: Բայց սրանով չսահմանափակվեց օրվա խորհուրդը: Հանդիսության ընթացքում տեղի ունեցավ «Դանդի փրիշու մեթալս» կորպորացիայի բոլոր ընկերությունների համար միասնական անվանման («Դանդի փրիշու մեթալս Կապան») ու տարբերանշանի շնորհանդեսը: Նախ տեսաֆիլմի միջոցով ներկայացվեց ընկերության անցյալն ու ներկան, նրա պատմությունը: Բացման խոսքում գլխավոր տնօրեն Ջոն Զաբրայանը հաղորդեց. «Ընկերությունն ունի 1228 աշխատակից, յուրաքանչյուր յուրահատուկ է իր աշխատանքով, իր մտածելակերպով, իր մոտեցումով, ունանք կատոն հրաշքներն են», - եւ փորձեց կատակել՝ «Ունանք էլ, գլխիս ցավերն են: Ունանք նվիրվածությամբ են աշխատում, ունանք էլ փոքր երեխայի նման

է դառնում: Յոթ ամիս է, ինչ աշխատում են «Դանդի փրիշու մեթալսում», այդ ընթացքում հինգ անգամ եղել են Հայաստանում, մշտապես տպավորված են մեր աշխատողների նվիրվածությամբ եւ այն ներուժով, որով օժտված է Կապան համայնքը: Ավելի քան մեկ տարի առաջ մենք սկսեցինք մի գործընթաց, որ պիտի ավելի հստակ արտացոլեր, թե ով ենք մենք որպես ընկերություն եւ որն է մեր նպատակը: Եւ համագործակցելով Հայաստանի մեր գործընկերների հետ, ստանալով նրանց խորհուրդները, ստեղծեցինք մեր տարբերանշան եւ մեր անուն այստեղի հանքարդյունաբերության ընկերության համար»: Այնուհետեւ իր ելույթում նա մասնավորապես այն միտքը հայտնեց, որ հին անվանումը եւ տարբերանշանը կապված էին նախկին սեփականատերերի ընկերության անվան հետ: Այն լայն հանրությանը չէր տալիս այն ընդհանուր պատկերացումը, թե ով է «Դանդի փրիշու մեթալսը» որպես ընկերություն, բացի այդ նոր

ված աշխատակիցը հարմարավետ բնակարան կստանա», - հայտարարեց «Դանդի փրիշու մեթալս Կապան» ընկերության գլխավոր տնօրեն Ջոն Զաբրայանը: Արցախյան պատերազմում հայրենի սահմանների պաշտպանների շարքերում էին ընկերության (նախկին Կապանի լեռնահարստացման կոմբինատ) աշխատակիցները: Նրանցից հինգը չտեսավ Կապան քաղաքի վրա բացվող խաղաղ առավուտները: Երեկոյի ընթացքում հարգանքի տուրք մատուցվեց Արցախյան գոյամարտում ընկած ձեռնարկության հինգ աշխատակիցների՝ Լյուդվիգ Ստեփանյանի, Հարություն Բալայանի, Արմեն Վարդանյանի, Գառնիկ Սահակյանի, Ալեքսան Գարսայանի հիշատակին, մեծարվեցին նրանց ընտանիքները: Վերաբերմունքի արժանացան արտադրության գործընթացում դժբախտ պատահարի հետեւանքով մահացած Դավիթ Մկրտչյանի, Արա Պողոսյանի, Արմեն Եղիազարյանի հարազատները: Ի դեպ, ձեռնարկության նախաձեռնող աշխատակիցների հիշատակը հավերժացնում է ընկերության մուտքի մոտ տեղադրված հուշաքարը: Եւս մի փաստ նշվեց երեկոյի ժամանակ. 2010 թվականի հունիսի 18-ին դարաբաղադրեցանական շփման գծի հարավարեւելյան հատվածում լուրջ միջադեպ գրանցվեց: Հակառակորդի դիվերսիոն խումբը փորձեց թափանցել հայկական տարածք: Թշնամու մտադրությունը չիրականացավ, բայց եղան գոհեր եւ վիրավորներ: Վերջիններիս թվում էին Կապանից գորակազմած Անդրանիկ Արզումանյանը ու Գարիկ Մաթեոսյանը: Ընկերության աշխատակցուհի Անժելա Հարությունյանի որդին՝ Անդրանիկ Արզումանյանը, տեւական ժամանակ գիտակցության չգալով՝ մահկանացու կնքեց: Գարիկ Մաթեոսյանն ապաքինվեց եւ գործարկվեց հետո աշխատում է «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունում: Տնօրինությունը հավուր պատշաճի գնահատեց հայրենիքի պաշտպանների սիրանքը եւ Անժելա Հարությունյանին ու Գարիկ Մաթեոսյանին նյութական օժանդակություն հատկացրեց (500 հազարական դրամի չափով): Տնօրենի վկայագրին եւ դրամական պարգևին արժանացան վաստակած հանգստի անցած Արկադիա Գալստյանը եւ նրա դուստրը՝ ընկերության աշխատակցուհի Մերին: Կարճատև էր վաստակաշատ լեռնագործի խոսքը՝ աշխատեք այնպես, ինչպես ես եմ աշխատել, իսկ դուտերը հորդորեց գնվ հոր հետքերով: Ի դեպ, վերաբերմունքի արժանացան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները եւ լրագրողները, որոնց նվիրեցին «Դանդի փրիշու մեթալս Կապան» տարբերանշանով գավաթներ: Երեկոյին տոնական երանգներ հաղորդեցին մշակույթի կենտրոնի «Երկի դանս» շուր ստուդիայի (գեղարվեստական ղեկավար՝ Երիկ Քոչարյան) սաների կատարումները:



Վարագույն ավանդույթները շարունակվում են

ԱՐԶԱԳԱՆՔ
ՄՊԱՐՏԱԿ ԶԱԲԱՐՅԱՆ
Եղվարդ համայնքի ղեկավար

Հայաստանի գյուղերում տիրող վիճակի մասին այսօր չեն խոսում լոկ ալարկոտները: Այդ կարեւորագույն եւ անհետաձգելի հարցի լուծումն անհնարին է առանց զանգվածային կարգուկարգության ակտիվ մասնակցության: Մամուլը, լրագրողի աչքերով, ինչպես հայելին, պետք է արտացոլի մեր իրականությունը եւ այն հասանելի դարձնի մասսաներին: Բայց ինչ է տեղի ունենում, եթե լրագրողի դերում հանդես է գալիս կասկածելի անցյալով եւ ներկայով, ակնհայտորեն ինչ-որ մեկի ներշնչանքով համար կարող էք կարողա նորաթուխ ինչ-որ թերթի հունիսի 7-ի համարում տպագրված հոդվածը Սյունիքի մարզի Եղվարդ գյուղի մասին: Հոդվածի հեղինակը հավանաբար մոռացել է, որ ապրում է մի փոքր շրջանում, որտեղ գրեթե բոլորը ճանաչում են իրար: Եվ ահա այս «լրագրողը», եղվարդցիներին քաջ հայտնի համագյուղացու ուղեկցությանը, թերեւս կյանքում առաջին անգամ, կես ժամով, գալիս է գյուղ, թշնամու թիկունքում գործող հետախույզի նման գաղտնի մի քանի անիմաստ լուսանկարահանում կատարում եւ վերադառնում քաղաք: Տպագրված հոդվածը գրվել էր նախապես: Գյուղացիները նրան չեն էլ տեսել, սակայն գիտեն, թե որտեղ

է հողվածում տպագրված հերյուրանքների իրական ակունքը, իսկ իրեն լրագրող համարող սուբյեկտը նույնիսկ հարկ չի համարել ճշտել անգամ տարրական տեղեկությունները, մասնավորապես այն, որ համայնքի ղեկավարի կինն ակունքի տնօրեն է նշանակվել շատ ավելի վաղ, քան ամուսինն ընտրվել է գյուղապետ, իսկ համայնքային ծառայողներն աշխատանքի են ընդունվում մրցութային կարգով: Այնուհետ է, որ գործ ունենք անգորագետ լրագրողի եւ հապճեպ կազմակերպված գործարքի հետ: Ես կարող եմ հասկանալ այս գործարքի իմաստը՝ ծանոթ լինելով դրա պատվիրատուի տկարամտությանը, բայց ինձ համար անհասկանալի է, թե ինչպես կարող է լրագրող դառնալու հավակնություն ունեցող մարդը ներքաշվել նման ստոր ձեռնարկի մեջ՝ ավելորդ անգամ վարկաբեկելով եւ իրենց մեռելածին թերթը, եւ իր սեփական առանց այն էլ ոչ անբիծ հեղինակությունը: Սա այն դեպքն է, երբ նախրապանն առաջ է ընկնում նախիրից, եւ նախիրն է ուղղորդում նրան: Խելքի եկեք, իրականությունը նենգափոխելով, կեղծ տեղեկություններ տարածելով՝ դուք վերջնականապես կավերեք մեր գյուղերը, եթե, իհարկե, ձեր գրվածքը լրջորեն ընդունող մի քանի մարդ գտնվի ամեն մի գյուղում: Գյուղի իրական վիճակի, կատարված աշխատանքների եւ առկա խնդիրների մասին տեղեկանալու համար Եղվարդ եւ իրավիճակն ազնվել եւ անաչառ լրագրողներին, ովքեր մտահոգված են հայ գյուղի պահպանման եւ ծաղկման հարցով: ■



պիտի հորդորես, որ աշխատեն: Բայց նաեւ ասեմ, որ իմ տնօրինության ընթացքում տեսնում եմ մարդկանց մեջ հոգեբանական մեծ փոփոխություն, աշխատանքի հանդեպ, վերաբերմունքի փոփոխություն: Միջոցառմանը մասնակցում էր «Դանդի փրիշու մեթալս» կորպորացիայի արտադրության գծով փոխնախագահ Դեյվիդ Ռեյնը: «Ընկերության սեփականատեր Ջոնմաթեոսյանը, ասաց նա, ջանում եմ ստեղծել առաջնակարգ ընկերություն, որ խարսխված պիտի լինի այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են արժանապատվությունը եւ հարգանքը, պատասխանատվությունը շրջակա միջավայրի հանդեպ: Առաջին պլանին պիտի լինեն արտադրության շարունակական բարելավումը եւ անվտանգությունը, ինչպես նաեւ ներդրումները համայնքում: Այս ամենը, կարծեք, իրականություն

տարբերանշանը վկայությունն է այն բանի, որ «Դանդի» մտադրված է երկարաժամկետ գործունեություն ծավալել Կապանում: Ինչպես, սկսվեց պարզեցնել համընդհան արարողությունը: Տնօրենի վկայագրին եւ 100 հազար դրամ պարգևավճարին արժանացավ ընկերության տասը աշխատակից: Հինգ աշխատակից (Ժիրայր Պողոսյան, Տիգրան Աղայան, Միհր Ավետիսյան, Ռազմիկ Մարգարյան, Սյունե Փարսյան), ովքեր մրցանակաբաշխության երկրորդ հորիզոնականում հայտնվեցին, պարգևատրվեցին 400 հազարական դրամով, իսկ «Ընկերության լավագույն աշխատակից» ճանաչվեց մեքենավար Վարդան Վարդանյանը, ում հանձնվեց երեք միլիոն դրամ պարգևավճար: «Եթե այս տեսնեք թուղ աշխատեք, հաջորդ մրցանակաբաշխությունում լավագույնը ճանաչեք»

ՎԱՐՏԱՍ ՕՐԲԵՆԱՆ

Կաթիլ ոգեւորությունը, ուժը եւ եռանդն ի շահ Սյունիքի բարությունը տալու-ծախսելու մասին: Միայն եմ համարում պատկերացումները, թե իբր Սյունիքին պետք է « քարե բռուցք» կամ, այսպես ասած, «ուժեղ» ձեռք: Սյունիքի մարզում հո վայրենիներ կամ քարե դարի մարդիկ չեն ապրում: Այս ի՞նչ անհեթեթ է վիրավորական կարծրատիպ կամ մտածելակերպ է ձեւավորված մեր մարզի մասին: Մեր երկրամասի ժողովուրդը հնագույն մշակույթի եւ քաղաքակրթության կրողն է, վկան՝ Տաթևի համալսարանը, հարուստ ազնվական, թագավորական տոհմերով, պատմիչներով, պատմական

երեւելիներով եւ հայրենասիրական անթիվ խիզախումներով: Հետաքրքիր է «ուժեղ» ձեռքի կողմնակիցներն ինչի՞ց են վախենում. մեր տուր, կշռադատող, առողջ մտքի՞ց, թե՛ անարդարության հանդեպ գեներտիկ անհանդուժողականությունից եւ ընթուստությունից: Բայց դրանք ոսկե հատկանիշներ են, որոնցով միայն պետք է հպարտանան մեր երկրի իշխանավորները, այլ ոչ՝ զգուշանան եւ խարազանեն ու վերջում էլ՝ ջարդեն: Ամենամեծ ուժը մտավորական մտքի, խղճի, բարոյական ու սիրո մեջ է: Իսկ ուժը, որ այս դեպքում բիրտության, դաժանության իմաստով է կիրառվում, թողնենք մեր ուժային

կառույցներին՝ կիրառելու միայն հակառակորդի դեմ: Իմ խորին համոզմամբ՝ Սյունիքի մարզը պետք է կառավարել միայն ողջամիտ սիրով, համբերությամբ, նրբանկատությամբ եւ բարությամբ: Իսկ թե ում են տեսնում Սյունիքի մարզպետի պաշտոնում, ասեմ, որ արժանավորներ կան՝ շրջանառված կամ չշրջանառված, բայց իրական դաշտում, անձամբ ես, տեսնում եմ Աժ պատգամավոր, համերկրացի Վահե Հակոբյանին: Սերված լինելով այնուհետև ավանդապատ գերդաստանից, նա լիովին օժտված է այն բոլոր հատկանիշներով, որոնք վերը թվարկեցի: Համոզված եմ, Վահե Հակոբյանը

կարողանա Սյունիքի բարոյահոգեբանական մթնոլորտը փոխել, այն դարձնել ավելի բարյացակամ եւ հանդուրժող, իսկ տնտեսությունը՝ հանել վերելքի ճանապարհ: Անկախ նրանից, թե ով կլինի Սյունիքի վարկա մարզպետը, մենք՝ գործարարներս, չպետք է հանգիստ նստենք եւ ձեռքներս ծալած՝ ամեն առիթով սպասենք պետության վերահաս օգնությանը կամ հովանավորչական միջամտությանը: Մեր հերթին պետք է ամեն ինչ անենք, որպեսզի վերականգնենք մարզի արտադրական հզորությունը, որպեսզի վերելք ապրի մեր տնտեսությունը. նոր աշխատատեղեր բացվեն, մարդիկ

պարեն բարեկեցիկ եւ արժանավաճե՛լ՝ ապահովված առողջությամբ, առանց ստորացումների, սեփական երկրի ու արժանապատվության գիտակցմամբ, կարողանանք մեր արտադրանքը հանել նաեւ արտաքին շուկա, նոր պատվիրատուներ փնտրել, միջոցները ծառայեցնել իրական նպատակներին՝ դրսի տնտեսական աշխարհում բարձրացնելով ոչ միայն քաղաքի ու մարզի, նաեւ երկրի վարկանիշը, նրա հարգն ու պատիվը:

Հարցազրույցը՝ ՍՈՒՍԱՆԱ ԲԱԲԱԶՆՆԱՆԻ 2 հուլիսի 2013թ.

